Պարույր Սևակ

Ամենից առաջ ես հայր եմ

Երբ անլուսընկա ու պարզ երկնքում
Աստղաբներ են երևում նորից՝
Բնակալներով իրենց հատ ու կենտ
Կամ թխսկան հայցող ձվակույտերով,
Երբ իր սև կաթով գիշերը բարի
Շեկ լուսաբացն է մայրաբար սնում,-
Կրկին խոսում է հայրությունն իմ մեջ:
Աշխարհի բոլո՜ր որբ մանուկներին
Որդեգրելու այն միտքը կպչուն,
Որ սոսնձվել է իմ հիմար սրտին
Ու դարձել նրա թաղանթը երկրորդ,
Այդ միտքը նորի'ց-կրկի'ն-վերըստի'ն
Ճչում է իմ փակ երակների մեջ:
Ուզում եմ, որ ինձ «հայրիկ ջա՜ն» կանչեն
Աշխարհի բոլո՜ր-բոլո՜ր ծայրերից:
Ուզում եմ, որ գան,
Թղթերս խառնեն,
Քաշեն մազերըս,
Նստեն ծնկներիս,
Պաչպչվենք ամուր,
Եվ պարզ նկատեմ

Իմ իսկ սեփական նմանությունը
Բոլորի՛ դեմքին,
Շարժուձևի մեջ-
Շեկ լինեն թե թուխ,
Աղջիկ թե տղա...
Ես կասկած չունեմ,
Որ եթե հանկարծ գա մի հարցասեր
Եվ ինձ՝ քնածիս,
Ինչպես որ հարկն է դեռ չարթնացրրած՝
Հարց տա.
_Ի՞նչ ես դու ամենից առաջ,-
Ես կասկած չունեմ,
Որ դեռ չզարթնած,
Դեռ քունը գլխիս.
-Ամենից առաջ ես հա՛յր եմ, - կասեմ....

19.XII.1959
Թիֆլիս